



## ՀՈՒՍԻԿ ԱԲԵՂԱ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ

(Մայր Արռաք բանգարանի վարչէ)

## ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐԵ



ին Կտակարանի, ինչպես նաև հին աշխարհի կրոնական և քաղաքական մեծագործ գեմքերից մեկն է Դավիթը, որպես մարգարե և թագավոր, որպես մտածող ու բանաստեղծ, որպես անկեղծ ապաշխարող և մեծ սուրբ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ամեն տարի, գեկտեմբեր ամսին, Քրիստոսի ծննդյան տոնը կանխող ավագ տոնների շարքում, մեծ հանդիսությամբ նշում է Դավիթ մարգարեի հիշատակը, Հակոբ Արդար կոշված առաքյալի տոնի հետ, որն էր «գոտիկ» առաքելոց սրբոց և կոչեցաւ եղանակ: Տեսո՞ւ ի Տանէ Դավիթ:

Դավիթ Աստուծո սիրելին էր: Նա իր կյանքի բոլոր օրերում ապրել է Տիրոջ օրենքի մեջ և միխիթարյան է Տիրոջ խոսքերով: Նա իր ամրակուր հավատով՝ բոլոր տեսակի փորձությաններով լի ճանապարհից անցել է և հասել է ոհ ճանապարհս արդարութեան վասն անուան Հօր իւլոյ:

Դավիթի կյանքի ու գործունեության մասին ընդարձակ կերպով պատմված է Հին Կտակարանում (Ա. թագ. ԺԶ—Գ թագ. Բ.):

Դավիթ կրտսերագույն որդին էր Հեսսիկ (Հուդայի սերնդից, ծնված Թիթղեհեմում 1085 թվականին Ք. Ա.):

Պատանի Դավիթը արտաքնապես վայելակազմ էր՝ մանր ու քնքուզ դիմագծերով,

ալեծածան մազերը բազմաթիվ խոպոպներով թափվում էին նրա ճակատի և այտերի վրա: Մարմնական իր հափշտակիշ գեղեցկությունից բացի նա քաջահմուտ նվագող էր: Նա սեղանիկ լուսովն զուարձանայր և հոգտվն վերանայր ի կամարս լուսեղինս:

Անվեհեր խիզախության այս տիպարը, առը զօրացաւ ի վերայ այլազգույն և հաւատով պարաեաց զնա», շնորհիվ իր համարձակության, հավատարմության և հոգու արիության, հովվի վիճակից կանչվում է Սավոյի արքունիքը, որպես երգիշ-երաժիշտ:

Նա իր մարգարեի անուշիկ քնարով ժամանակ առ ժամանակ սփոփում և զվարձացնում է իր խղճի խայթից և հոգու մաղձությունից տառապող Սավուղին: Նրա քնարի հրաշալի ձայնակիքները հնչում են պալատի սրահներում, մերթ սլանում են այնտեղից դուրս և հնչում են Թիթղեհեմի հովիտներում ու արձագանքում Սիրոնի բարձունքներում:

Դավիթը ապրում է պալատում ու ստեղծագործում, սակայն իր սիրելի ժողովուրդը տագնապալի օրեր է անցնուած: Քաղաքական հեղիեղուկ իրադարձությունների մեջ առ ու սարսափի է մատնված բովանդակ ժողովուրդը, որովհետև փղտացի ախոյան Դողիաթը, որի ամեն մի շարժվածք ու հայացք արտահայտում է զուազություն ու նենգություն, մարտահրավեր է ուղարկում Խորայելի

զորքին, թե ձեզանից մի մարդ ուղարկեցեք, որի հետ ես մենամարտեմ և նախատեմ ձեր բոլոր ազգը:

Եվ աշա Դավիթը ապավիտում է իր Տիրոջը և աղոթում. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՝ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՝ գողացայց»: Դավիթ Աստվածը լսում է իր ծառայի աղոթքը և շտառով առիթ է ընծայում նրան, որ իր մարմնական ուժը, բարոյական և հոգմոր գորտությունը ի սպաս դնի իր երկրի և ժողովրդի փրկության:

Սակայն Սալուլ թերահավատություն է արտահայտում Դավիթ՝ Գողիաթի գեմ մենամարտի դուռ գալու համարձակության նկատմամբ: Դավիթ քաջավատահ պատասխանում է. «Արածէր ծառայ քո զիաշինս հօր իրոյ և յրժամ գայր տուծ կամ արջ և առնոյր ոչնար ի հօտէ անտի, ելանէի զհեա նորա և հարկանէի զնա: Կորպէի ի բերանոյ նորա, և եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփտոյից նորա և հարկանէի և սպասանէի զնա: Զառնծ և զարջ սատակէր ծառայ քո: Եւ արդ ո՞չ երթայց սատակեցից զնա և բարձից այսօր զնախատինս յիսրայէլէ»:

Լայնաթիկումք գահի մեջ նստած Սակուլ իսկուն ըմբռնում է, որ Դավիթ իր խոսքերով արտահայտում է իր ուժի անպարտելիության գիտակցությունը:

Դավիթի ամենահաղթ հավատն արտահայտվում է իր երկրորդ խոսքում, ուղղված Գողիաթին. «Դու գաս ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ, և ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն գորութեանց, ճակատու իսրայէլի զոր նախատեցեր այսօր: Ես առից զգուի քո ի քէն, և տաց զգէշ քո և զդիակումն երկնից և գազանաց երկրի, և ծանիցէ ամենայն ժողովորդ այս թէ ոչ սրով և գեղարդեամբ փրկէ Տէր, զի Տեառն է պատերազմ»:

Դավիթի և Գողիաթի կոիվն իր պատմական արժեքից բացի ոճի հոգմոր-բարոյական իմաստ:

Սերտելով այս պատմությունը, մեր տւշակորությունն են գրավում զանազան կետեր, և տեսնում ենք, որ ամբողջ եղած պայքարը մարդկային հոգու և մեղքի գեմ մղված պայքարի մի պատկերալից ներկայացում է:

Դավիթ, Գողիաթին սպանելուց հետո հաղթական վերադառնում է արքունիք: Սակուլը իրու վարձատրություն նշանակում է Դավիթին իր զորքի հրամանատար: Նա որպես հրամանատար ծառայում է երկար տարիներ և իր բարի բնավորությամբ և առատածեռնությամբ վայելում է սերն ու հարգանքը ոչ միայն զորքի, այլև համայն ժողովրդի: Ահա թե ինչու Սակուլի հանդիսատը խանգարվում է և հոգեկան խաղաղությունը կորչում: Սակուլ, դրդվելով շար նախանձից և չափամիտ

հոգուց, սատանայական միջոցների է գիմում, որպեսզի վերջ զնի Դավիթի օրհնյալ կյանքին: Սակայն Դավիթը որոշ ժամանակ զերծ մնալու համար Սալուլի հալածանքներց, հեռանում է պալատից և ապաստանում Հուդայի անապատները, որտեղ փոքր գորավներ հավաքելով իր շուրջը, պաշտպանվում է արտաքին հարձակումներից:

Սակուլ շարունակում է հալածել Դավիթին իր անվերջ կոիվներով, որոնք, սակայն, միշտ ձախողվում են: Նույնիսկ մի քանի անգամ գերի է ընկնում Սալուլ Դավիթի ձեռքքը, բայց Դավիթ նրա կանքը չի տշնչացնում, այլ ազատ է թողնում նրան: Այսպիսով, Դավիթ իր ժողովրդի աշխին է՝ ավելի է բարձրանում, է՝ ավելի սիրելի է դառնում նրան:

Անցնուամ են տարիներ, որոնք տանում են նաև Դավիթի հուսահատ շրջանը:

Մարտի դաշտում հերոսի մահով ընկնում են Սակուլը ու Հովհաննը:

Դավիթը անկեղծ սրտով ուղբում է Սակուլի և իր սիրելի բարեկամ և եղբայր քաջ Հովհաննի մահը.

«Երձանացիցի իսրայէլ, ի վերայ մեռելոց,

ի բարձունս քո վիրաւորաց... Զիանդ անկան զօրաւորք ի մէջ

պատերազմի... Սաւուլ և Յովինաթան, սիրելիք և

գեղեցիկք և վայելուզք, Թեթևագոյնք քան զարծուիս, զօրացան քան զափիւծունս.

Դստե՛րք իսրայէլի, լացէ՛ք ի վերայ Սատուլայ.

Ցաւ է ինձ ի վերայ քո, եղբայր իմ Յովինաթան:

Դավիթ մեծաշուր հանդիսությամբ թագավոր է օժկուլ Սամվել մարդարեի ձեռքով և կոչվում է «Ճիրոց օժյալ» անունով:

Ստեղծված քաղաքական հաջող պայմաններում, իր գահակալության առաջին օրից Դավիթ մեռնամուխ է լինուած իր փայփայած երկրի վերաշինման սուրբ գործին: Նա, առ Բարձրյալն ունեցած իր անդրդմելի հավատով, առաջին հերթին երտաւաղեմ քաղաքը դարձնում է իրը աթոռանիստ քաղաք: Ապա մեծաշուր հանդիսությամբ և կրոնական փառավոր պատվով դեպի սուրբ քաղաքն է տանում Ուխտի Տապանակը ու կենդանի ովկորությամբ կարգի դնում աստվածային պաշտամունքները: («Ճարցէք զողոսնէ զերուաղէմի, և զշինութենէ, ոյք սիրէք զնա»:— Սաղմ. Ճին):

Դավիթ իր թագավորության ժամանակ վարում էր երկրի դատական գործերը: Նա արդար էր և անաշառ: «Յիրաւանց քոց կո՞չ խոտորեցայ, զի Դու օրէնսդր արարեր զիս» (Սաղմ. Ճին):

Դավիթի թագավորության տարիները շանցան առանց փորձությունների: Նա որպես մարդ ընկավ զանազան մեղքերի մեջ: Թագական է հիշել Ուգիայի և Բերսաբերի պարագան: Սակայն Դավիթ զգալով իր հանցանքի խորովիումն ու տպականիչ հոգին, զղաց և խոնարհությամբ ապաշխարեց՝ «Ողբերեա» ինձ Աստուած, ըստ մեծի ողորմովին քում, ըստ բազում գիտեան քում, քաւեա՝ զանօրինությամս իմ» (Սաղմ. Ծ):

Այս այս զցման մեջ է կայանում Դավիթի հոգիկան մեծովիլումն ու սիրելովիլունը: Նա իր ախտաժիտ բնավորության շարադեալ հակումների պատճառով, իսկույն խոնարհվում է Տիրոջ կենդանի խոսքի առաջ և արտասամբոր անշերով խոստովանում է իր մեղքերն և ապաշխարում:

Նոր Կոտակարանյան ապաշխարությունը բարձրակետն է կազմում Դավիթի կենսագործյան: Սավույս ընկավ իր մեղքերի և անօրհնությունների թակարդի մեջ և կործանվել առհավետ, մինչդեռ Դավիթի քաջության ունիցավ այդ նույն թակարդը իր զցումով խորտակելու:

Այնուհետև Դավիթ ավելի մեծ եռանդով շարումնակում է իր հոգուր նվաճումներն աստվածաշատության ճանապարհն և անցնում է համբաց փառք: Նա իր նորոգված հոգու համար գոհություն է տալիս Աստուածուն. «Դիարձոյց զուություն իմ յուրախութիւն, զերծ յինէն զեռուծ և ինձ զգեցոյց զուրախութիւն» (Սաղմ. Իթ):

Դավիթի թագավորում է 40 տարի և վախճանվում 71 տարիկան հասակում:

Նա իր թագավորության տարիներին վերըստին հաստատում է հսրայիկի խարիսլած պետության հիմքը, ընդարձակում է նրա սահմանները շնորհիվ իր իմաստուն զեկավարություն: Նա մեծ ոգենորությամբ ձեռնարկում է նաև Եղովայի պատվին կառուցվող մեծ ՏԱ հարի շինությանը, որն ավարտում է իր որդին՝ Սողոմոնը:

Դավիթի հետևում է իր անմահ նախահայրենի օրինակին՝ միշտ անաղարտ և սուրբ պատճետվ նրանց պատգամները: Նա անցնում է արյունոտ ու փշալի ճանապարհներից, բարձրանում է փրկության գագաթը, որտեղից գալիք ապագայի համար մարգարեանում է, «Պատմեսցի զծեանէ ազգի որ գալոցն է, պատմեսցին զարդարութիւն նորա

ժողովրդեան որ ծնանելոցն իցէ, զոր արար Տէր» (Սաղմ. ԻԱ):

Դավիթի անունը մտած է համաշխարհային դրականության գանձամատյանի մեջ մարդարատե տառերով՝ «Սաղմոսերգու»:

Երեք հազար տարի առաջ սաղմոսներն երգիւմ էին միայն Հուգայի անապատներում և թեթեհեմի հովիտներում: Այսօր սաղմոսները երգիւմ են աշխարհի բոլոր լեզուներով: Նրանց մեջ մարդ զգում է ոեր, ուրախություն, մխիթարություն և Աստուածուությունը:

Դավիթը տեսնում է ու ապրում արդար ու բարի Աստուածուն: «Երկինք պատմեն զիասու Աստուածոյ, և զարարածու ձեռաց նորա պատմէ հաստատութիւն» (Սաղմ. ԺԸ):

Սաղմոսները երկնարաք աղոթքներ են, մեղքի դեմ համայնաբուժ բալասաններ, և մխիթարություն գրկածների, վշտացյալների և տառապյալների համար:

Դավիթի սաղմոսները տնեն նաև դպստիարական մեծ նշանակություն: Եվ իզուր չէ, որ դրանք մտել են քրիստոնեական պաշտամոնքի մեջ, որպես հոգմոր կրթության և շինության կարմրագույն միջոց:

Դավիթը, որպես թագավոր, «Գրաշազարդական կարգ թագաւորաց»: Նրա գերդաստանից՝ «Ի Տանէ Դավիթ», Աստված հարազ մարդկության համար «Եղջիւր փրկութեան»: «Անմարմնոց վերնոց թագաւոր Քրիստոսը, ամարմնով երեցաւ յերկրի ի զաւակէ Դավիթ, որով Դավիթ մարգարեն իրավամբ անվանվեց Աստվածահայր»:

Աստված Դավիթին խոստացել էր սի պտղոյ որովայնի նորա նստացանել յաթու նորա»: Եվ Քրիստոս ժամանակակիցներից կոչվեց «Որդի Դավիթ»:

Մեր շարականագիրը հյոյակամրտեն նկարագրել է «Կանոն Դավիթի մարգարէին և Յակոբայ Աստվածոյն» շարականի մեջ այդ երկու հարազատների, երկու ընտրյալների գերը: Քրիստոնեական եկեղեցու հիմքը հաստատվել է Դավիթի սերունդով, «առաքելաւն Յակոբաւ և մարգարէին Դավիթ»:

Արդարեւ, երանելի է այն մագրդը, որի ու գնաց ի խորհութեալ ամբարշտաց, ի ճանապարհի մեղաւորաց սա ոչ եկաց, և յաթուս ժանտից ոչ նստաւ: Այլ յօրէնս Տեառն են կամք նորա, և յօրէնս նորա խորհեցի նա ի տուէ և ի գիշերի» (Սաղմ. Ա 1—2):

